

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԴՎՅԱԼ ՆՎԻՐՅԱԼԸ

Գրականությունը ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի համար և՛ աշխարհայացք է, և՛ աշխարհընկալում, և՛ սեր է, և՛ կրոն, է, և՛ անդուլ աշխատանք է և հանապազօրյա հաց: Նրա համար օրը բացվում և փակվում է գրքով: Եվ հենց այդ գիրքն է թելադրել գիտնականի ճակատագիրը, կյանքի ուղու հիմնական ճամփան, որ Լեռնային Ղարաբաղի հեռավոր Սեյտիշեն (այժմ՝ Խաչեն) գյուղի դպրոցի շրջանավարտը, ապա և նույն դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչը, հենց նոր 18 տարեկանը լրացած (1942 թ.) զորակոչվել է Կարմիր բանակ, մասնակցել մարտական գործողություններին, ծանր վիրավորվել և ապա 1944 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը:

Եթե շա՛տ և շա՛տ ուսանողներ Պատերազմ և խաղաղություն փոխհարաբերության մասին լսել են Սովինֆորմբյուրոյի հաղորդագրություններից կամ Լև Տոլստոյի հանճարեղ վեպից, ապա այն Ս. Սարինյանն զգացել էր սեփական մաշկի վրա և լավ գիտեր կյանքի գինը: Եվ ահա իր այդ միակ կյանքը նա կապեց իր անդրանիկ սիրո՝ գրականության հետ, կապեց շռայլորեն, անդավաճան ու մեկընդմիշտ: Մեծ էր նրա հետաքրքրության շրջանակը՝ հայրենի գրականությունից մինչև համաշխարհային գրականություն, համակողմանի էր նրա ընդգրկումը գրականության տեսությունից մինչև գրականության փիլիսոփայություն:

Հայ քննադատական մտքի «ոսկի ֆոնդին» են պատկանում Ս. Սարինյանի «Րաֆֆի» (1957) մենագրությունը (որն ի դեպ պահպանվում է Իսահակյանի տուն-թանգարանի գրադարանում՝ հեղինակի ընծայագրով): «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» (1955), «Հայկական ռոմանտիզմ» (1966), «Հայ գրականության երկու դարը» (5 հատոր), «Լևոն Շանթ»:

Ս. Սարինյանի ժամանակակիցները լավ գիտեն, որ նա միշտ մերժել է պաշտոնները և զբաղեցրել իր իմացածին արժանի բարձր դիրքեր՝ առաջին հերթին գիտության մեջ: Եվ դարձել է հայ գրականագիտության հրամանատար, բացարձակապես իր գրածի, իր ստեղծածի, իր խոսքի տրամաբանության ու իր ստորագրության հեղինակության շնորհիվ: Տառապանքի ու տքնանքի, բերկրանքի ու արարմունքի գնով: Ի հեճուկս ճակատագրի բազում հարվածների, Սարինյանը՝ ինչպես միայնակ կաղնին, կասեցրել է այդ հարվածները, որոնք կարծես ավելի ամրացրել են իր ջլոտ ճյուղերը, իսկ նրա արմատները ավելի ուժ են առել հայրենի

բարեբեր հողից.... Նա երբեք չի հեռացել իր ընտրած ուղուց. Գիտությունների ակադեմիայի իր հայրենի գրականության ինստիտուտում նա աշխատում է ուղիղ 64 տարի, հայ նոր գրականության բաժինը նա ղեկավարում է 54 տարի: Իրոք, Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու արժանի թվեր:

Նա գրականության պատմության և տեսության մի ամբողջ գրադարան է ստեղծել և շարունակում է ստեղծել: Սակայն նա սոսկ հայկական ռեալիզմի կամ թե ռոմանտիզմի փայլուն գիտակ չէ, այլ կարելի է ասել Յամայի հային գրականության ողջ դասական ժառանգության: Նա զարմանալի սուր դիտողականություն ունի նկատելու նորը, տաղանդավորը՝ Ումբերտո Էկո թե Գաբրիել Գարսիա Մարկես, Պարույր Սևակ թե Յանտ Մաթևոսյան: Նրա ծարավը դեպի նոր ձեռագիրը, տաղանդավոր գիրքը իրոք անսպառ է: Իմանալով, որ Երևանի բուկինիստական գրքերի խանութում ստացել են Վլադիմիր Նաբոկովի նախկինում ԽՍՀՄ-ում արգելված վեպերը՝ ռուսերեն, նա խնդրեց իր բաժնի աշխատակցուհի Ս. Մարգարյանին ձեռք բերել այդ գրքերը: Եվ դեռ տասը օր չէր անցել, երբ ես այցելեցի Սարինյանին ու հարցրի, թե տեղ հասա՞ն նաբոկովյան վեպերը, նա ասաց (իսկ դրանք թվով հինգն էին)՝ արդեն ամբողջությամբ կարդացել է. «Շա՛տ մեծ գրող է և ի՛նչ հրաշալի է նրա լեզուն, ափսոս, որ առաջ քիչ գիտեի նրա մասին»:

Մի առիթով Ջորի Բալայանը Սարինյանի մասին ասաց. «Он не только великий работяга, он и великий читатель» («Նա ոչ միայն մեծ մշակ է, այլև մեծ ընթերցող»): Իմ կողմից էլ ասեմ՝ նա երջանիկ է նաև, որ գրեթե հեռուստացույց չի նայում: Եվս կա մի բնագավառ, ուր Սարինյանն անփոխարինելի է. դա գրականության ինստիտուտի գիտական կոչումներ շնորհող մասնագիտական խորհուրդն է, որը նա ղեկավարում է բազում տարիներ: Ահա այստեղ նրա գործունեության մեջ զարմանալիորեն փոխգործակցում են սարինյանական իմացությունն ու սկզբունքայնությունը, խստապահանջությունը և մարդկային անսքող բարությունը: Այս բնագավառում նա իր վրա այնքան է վերցնում, որ խորհրդի մյուս անդամների պարտականությունները թեև ավելի ընդգծվում են, բայց և զգալիորեն թեթևանում են:

Սարինյանի ամենավերջին գիտական ստեղծագործական հաղթանակներից ամտարակույս պետք է համարել ինստիտուտի կողմից պատրաստվող «Յայ գրականության պատմություն» վեցհատորյակի՝ երրորդ և չորրորդ հատորների (հայ նոր գրականությանը վերաբերող մասնաշարն են) բաժինների գերակշռող

մասի շարադրումը, ծանոթագրումը և ընդհանուր խմբագրումը: Վեցհատորյակի գիտական պատասխանատուներից այս անգամ էլ Սարինյանը իր ղեկավարած բաժնով դարձավ առաջատարը, և խնդիրը միայն այն չէ, որ ինքը առաջինն ավարտին հասցրեց բարդ հատորի ստեղծումը, այլև միանգամայն նոր տեսափիլիսոփայական մոտեցում ցուցաբերեց գեղարվեստական արժեքների գնահատմանը՝ զերծ մնալով ավանդական դարձած փաստերի և երևույթների քրոնոլոգիական նկարագրական շարադրանքից:

Սարինյանը խոշոր վարպետ է դասական հեղինակի ընդհանրացված դիմանկարը կերտելու դժվարին գործում: Նա սեղմ, բայց ստեղծագործողի հիմնական առանձնահատկությունները վեր հանելու, երկի փիլիսոփայական խորքերը թափանցելու եզակի տաղանդով է օժտված. հիշենք նման բնույթի նրա՝ վերջին շրջանում գրված հատվածները - «Լևոն Շանթ», «Ավետիք Իսահակյան», «Պարույր Սևակ», «Պարույր Սևակի «Սայաթ-Նովան»:

Պատմությունը և դասականությունը իհարկե Սարինյանի գիտական ոգևորումների մշտական ակունքն են, բայց նրա սուր աչքը միշտ գրական ընթացիկ պրոցեսի վրա է. բավական է, որ ասպարեզ գա մի տաղանդավոր նոր երկ՝ Լևոն Խեչոյանի, թե Գուրգեն Խանջյանի, Արտեմ Հարությունյանի թե Էդուարդ Միլիտոնյանի, մենք անմիջապես կլսենք դրա վերաբերյալ սարինյանական արձագանքը հայ մամուլում:

Եվ ինչպես միշտ, հեղինակն անվրեպ է իր գնահատականներում, իր կանխատեսումներում: Սա էլ անշուշտ ի վերուստ տրված ձիրք է:

Շնորհավոր մեր գրականագիտության Նահապետի 90-ամյակը: